

ՄԱՍԵ ԱԼԻԽԱՆԵ

ՁԻԱՎՈՐԸ

Եվ ձիավորկ գնում է.
Դիմացը՝ դատարկ գերեզմանն է իր,
Ուր որդերը մարմին են ուտում:
– Իմ սահմանման մեջ մարմին չի մտնում, –
Ասում է, գնում:

Եվ ձիավորը գնում է,
Դիմացը՝ անհուն գերեզմանն է իր,
Ուր որդերը արյուն են խմում:
– Իմ սահմանման մեջ արյուն չի մտնում, –
Ասում է, գնում:

Եվ ձիավորը գնում է.
Դիմացը՝ հեռու գերեզմանն է իր,
Ուր որդերը ոսկոր են խժռում:
– Իմ սահմանման մեջ ոսկոր չի մտնում, –
Ասում է գնում:

Եվ ձիավորը գնում է, գնում...
Ճերմակության մեջ:

ՄՆԱՍ ԲԱՐՈՎ, ԿԻՆ

Ինձ դուր է գալիս հայր լինել,
Իսկ ամուսին՝ ոչ,
Ինձ հայր դարձրիր,
Սակայն ամուսին չեղա մի կարգին –
Հույսերիդ դիմաց,
Մնաս բարով, կին:

Ինձ դուր է գալիս պապ լինել,
Ավաղ իմ կողքին կին չեմ հանդուրժել,
Ու՞ր մնաց տատիկ,
Ինձ պապ դարձրիր,
Սակայն ամուսին չեղա մի կարգին –
Ջանքերիդ դիմաց,
Մնաս բարով, կին:

Ինձ դուր է գալիս միշտ վերադառնալ
Ինչպես իմաստուն մի քուրմ ու դերվիշ՝
Դեպի քեզ, տիկին,
Ձեռքերիդ վրա մեռնելու իղձը

Որպես հրաժեշտ լավ է փնտրված,
Որպես հրաժեշտ շատ է բնական,
Մնաս բարով, կին:

Քեզ բարի արև և երկար մի կյանք,
Մնաս բարով, կին:

Ու թե ցանկանաս իմ հետքերով գալ,
Չլռես հանկարծ, բողոքի լի,
Մեկ է, ուրիշ տեղէլ չեն փախչի ես,
Իմ սրտին դրված քարը բազալտե
Ծանր է ավելի,
Քան պահանջների տեղին-անտեղի,
Քան բողոքների անձայն-բարձրաձայն,
Մնաս բարով, կին:

Գուցե թե հիմա արդեն հասկանամ,
Որ տղամարդուս որպես եզակի,
Գերադասել ես կանացիաբար,
Փառաբանել ես կանացիաբար
Ամեն ինչից շատ, ամեն ինչից վեր,
Սակայն ինքս ինձ չեն գերազանցել
Քո աչքերում, տիկին, քո սրտում, տիկին,
Ոչ ավել, քան պապ, ոչ ավել, քան հայր,
Եվ չեն հասցրել լինել ամուսին,
Ում որ փնտրել ես քո ամբողջ կյանքում:
Պատրաստ եմ, ինչ խոսք, մեղքս ընդունել
Ինչպես սկզբում, մի վերջին անգամ,
Առանց ներումի ակնկալության,
Մնաս բարով, կին,
Մնաս բարով, կին: